ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 2 (7) 1941 թ., Երևան

Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

ՄԻ ՃՇՏՈՒՄ

(Ստ. Նազարյանի ծննդյան տարեթվի առթիվ)

Մեր կուլտուրայի ոչ միայն վաղ անցյալի, այլև նոր շրջանի մի շարք խոշոր դեմքերի կյանքի ու գործունեության ոչ բոլոր տվյալներն են մեզ հայտնի։ Այդ գործիչներից շատ քչերի կյանքն է հանգամանորեն և միավորներինը գիտականորեն ուսումնասիրված։ Շատ հաճախ էլ գրականության մեջ անվերապահորեն նշվել են տարեթվեր, բերվել են «փաստեր» ու «ապացույցներ», որոնք ոչ մի գիտական հիմնավորում չունեն, իսկ եթե «հիմնավորված են», ապա ոչ ծանրակշիռ փաստերի հիման վրա, իսկ երբեմն էլ քավարար հիմք է համարվել այս կամ այն ընդհանրապես հեղինակավոր մարդու լոկ խոսքը։

Այսպես է պատահել նաև Ստեփանոս Նազարյանի կյանքի ու գործունեության հանգամանքների լուսաբանման գործում։ Թողնելով այլ առթիվ կատարելու Ստ. Նազարյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ գոյություն ունեցող նկարագրությունների և մեկնաբանությունների մեջ եղած քաղաքական անճշտությունների ուղղումն և փաստերի ու փաստաթղթերի հիման վրա ճիշտ պատկերի վերանայումը, կանգ առնենք միայն նրա ծննդյան տարեթվի, ամսի ու ամսաթվի հարցի վրա և աշխատենք նոր հայտնաբերած փաստաթղթերի հիման վրա ցույց տալ իսկությունը։

Ստ. Նազարյանի մահվան առթիվ գրած հոդվածում («Փարոս Հայաստանի», 1879 թ., տեսր Ա., էջ 34) Զարմայր Մսերյանը, որն անձամբ ճանաչում էր Նազարյանին, շփվում էր, բայց առնվազն ոչ բարեկամական հարաբերությունների մեջ էր նրա հետ, գրում է. «Ստ. Նազարեանցը ծնաւ ի Խոյ ի 1810 թ. և էր որդի աղքատիկ Տէր Եսայի անուն քահանայի»։ Թե ինչ հիմք է ունեցել Զ. Մսերյանը Ստ. Նազարյանի ծննդյան տարին համարելու 1810 թվականը, իսկ ծննդավայրը՝ Խոյ քաղաքը, մեզ հայտնի չէ։ Փաստ է, որ Նազարյանի և՛ ծննդավայրը, և՛ տարեթիվն այստեղ ճիշտ չեն տրված։

Նույն՝ 1879 թվականին, Ս. Պետերբուրգի „Голос“ օրաթերթում (№ 30, էջ 3) տպագրված անստորագիր դրվատական նեկրոլոգում Նազարյանի ծննդյան տարին համարվում է 1812 թվականը։ Երկու դեպքում էլ ծննդյան ամիսն ու ամսաթիվը ցույց տրված չեն։

Ալ. Երիցյանը «Փորձի»-ի 1879 թ. № 11-ում տպագրած «Ստ. Նազա-

րյանց և նրա գրական գործունեությունը» հոդվածում Նազարյանի ծննդյան տարին համարում է 1812 թվականը և նույնպես ամիսն ու ամսաթիվը ցույց չի տալիս։ Այնուհետև նույնն են անում Սմբատ Շահազիզը և Լեոն իրենց գրվածքներում։ Հետագայում այսպես էլ ընդունվել է պատմագրության մեջ և, կարծես, կասկածանքի տեղիք չի էլ մնացել։

1812 թվականը Ստ. Նազարյանի ծննդյան տարին համարելու հիմք է ծառայել Նազարյանի համառոտ ինքնակենսագրությունը՝ տպված «Հյուսիսափայլ»-ի 1864 թ. 5-րդ տետրակում, որտեղ նա իր մասին ասում է. «... Ես 20 տարեկան հասակում 1832-ին թողեցի Թիֆլիզը, որ ուղևորվեմ ի Դորպատ»։ Իսկ ինչի՞ հիման վրա Լեոն և ուրիշները Ստ. Նազարյանի ծննդյան ամիսն ու ամսաթիվը հաստատապես նշում են նույն թվականի դեկտեմբերի 25-ը։ Նազարյանն իր ծննդյան ամիս-ամսաթվի մասին ոչ մի խոսք չի ասել ոչ վերոհիշյալ ինքնակենսագրականում, ոչ էլ մի ուրիշ տեղ և ոչ մի հիմք չի տալիս այդպես ենթադրելու, այլ աղբյուրներ էլ, որքան մեզ հայտնի է, չկան։ Կարող ենք ասել, որ այդ արվել է, հավանաբար, Ստ. Նազարյանին ծննդյան «մի որևէ» ամիս-ամսաթիվ տալու համար։

Տողերիս գրողը Մոսկվայի, Կազանի, Լենինգրադի արխիվներում հայտաբերել է (1939 թ.) մի շարք փաստաթղթեր, որոնք ի միջի այլոց, գալիս են ճշտելու նաև Ստ. Նազարյանի ծննդյան տարին, ամիսն ու ամսաթիվը։ Այս նույն հայտաբերած նյութերից ավյալ հարցին վերաբերում են մի շարք փաստաթղթեր, որոնցից գլխավորներն են.

ա) «Ծառայության ցուցակ», կազմված Լազարյան ճեմարանում 1874 թվի դեկտեմբերի 17-ին, որտեղ առաջին սյունյակում գրված է «60 տարեկան»։ Այս ցուցակում (формулярный список о службе) մանրամասն և ճշտությամբ նշված են Ստ. Նազարյանի կրթությունը, աշխատանքները տարբեր վայրերում և տարիներում, ամեն տեսակի պարգևատրումները, զավակների ծննդյան տարեթվերը և այլն՝ մինչև «աստուծո կամոք մահացավ 1879 թ. ապրիլի 26-ին» նշումով։ Վավերացված է Ինստիտուտի դիրեկտոր Ն. Դելյանովի կողմից[1]։

բ) Նույնպիսի «ծառայության ցուցակ» և ծննդյան նույն, այսինքն՝ 1814 տարեթվով, բայց շատ ավելի վաղ ժամանակի (1849 թ. նոյեմբեր 17) կազմված է Կազանում։

գ) Նույնը մի այլ ցուցակում՝ կազմված 1869 թվականին, գտնվում է Լենինգրադի արխիվում[2]։

դ) 1842 թ. հոկտեմբերի 8-ին գրված և Կազանի կայսերական համալսարանի խորհրդին ուղղված համառոտ ինքնակենսագրականը, որտեղ ծննդյան տարին դարձյալ նշված է 1814 թվականը („Рожден. 1814-го год в Тифлисе...“)։

ե) Ծննդյան պատշաճ և պաշտոնական վկայականը՝ գրված հայերեն և ռուսերեն լեզուներով և տրված 1832 թ. մայիսի 20-ին Վրաստանի Հա-

[1] Мособлархив, ф. Правления Лазаревского Института восточных языков, № 149, л. 128—136, 1849 г.

[2] АВП. К. и Б. фонд Дерпт. народного просвещения по Лазаревскому Институту, 1869 г., д. № 193, л. 2—8.



Նազարյանի ինքնակենսագրականի ֆոտոլուսանկարը

յոց թեմական հոգևոր կառավարության կողմից։ Այս վկայականի մեջ ասված է, թե՝ «Ստեփանոսն Նազարեան ծնաւ յամի 1814 ի 15 մայիսի... մկրտեցաւ ի սուրբ Մինաս եկեղեցւոջ... 7 յունիսի այնր ամի...»։ Ծննդյան վկայականն իսկականն է և, ինչպես ձեռագրերի համեմատությունն է ցույց տալիս, գրված է, անկասկած, Ստ. Նազարյանի ձեռքով։ Վկայականը, որի


Свидѣтельство

ЦѢНА 30. КОПѢЕКЪ

№ 193

Ծննդյան վկայականի լուսանկարը

լուսանկարչական պատճենը բերվում է ստորև, գտնվում է Կազանում[1]։

Գործ դրած ջանքերս՝ գտնելու Թիֆլիսի ս. Մինաս եկեղեցու 1800—1820 թ. թ. մկրտության և այլ մատյանները՝ ապարդյուն անցան։ Թբիլիսիի Քաղաքացիական գրության ակտերի գրանցման վարչության (ЗАГС) արխիվներում կան Թբիլիսիի և նրա նախկին նահանգի հայկական եկեղեցիների մատյանները, որոնցից, սակայն, ամենահինը 1817 թվականինն է։ Ս. Մինաս եկեղեցու պահպանված մատյաններն սկսվում են միայն 1838 թվականից։

Հիմք կա՞ արդյոք կասկածելու Վրաստանի Հայոց հոգևոր կառավարության կողմից տրված վկայականում նշված տարեթվի վրա։ Պետք է ասել, որ ոչ։ Ծննդյան վկայականը տրված է Նազարյանի՝ Դորպատ մեկնելու կապակցությամբ։ Ծննդյան վկայականն ավելի վաղ վերցնելու կարիք չի եղել։ Ծննդյան վկայականի մեջ տարեթիվը չէր կարող դիտավորյալ կերպով կեղծվել, դրա «կարիքը» չկար։ Նազարյանին իսկականից փոքր կամ մեծ ցույց տալը ոչ մի իմաստ չուներ, որովհետև, ասենք, ոչ զինվոր կանչվելու խնդիր կար այն ժամանակ, որ արգելառիթ լիներ սովորելու գնալուն և ոչ իսկ Դորպատում ուսումը շարունակելու նման կարգի դժվարություն։ Զէ՞ որ Խաչատուր Աբովյանը, Նազարյանից տարիքով մեծ, սովորում էր Դորպատում, և Նազարյանը 1812-ին թե 1814-ին ծնված լինելու երկու դեպքումն էլ 18 տարեկանից բարձր տարիք կունենար Դորպատ մեկնելիս, որպիսի հանգամանքը, մանավանդ նորանվաճ երկրի ժողովրդի պատանեկության ու երիտասարդության համար այն ժամանակ խոչընդոտ չէր կարող հանդիսանալ նույնիսկ գիմնազիոնում սովորելու։

Ինչպես տեսանք, Նազարյանն ինքը, մեզ հասած երկու տարբեր ինքնակենսագրականներում, որոնցից մեկը մյուսից 22 տարի հետո է գրված, իր ծննդյան տարբեր տարեթվեր է նշում, ընդորում երկրորդ դեպքում նա մոտավոր ճշտությամբ գրում է «20 տարեկան», որից եզրակացնում են, որ նա ծնվել է 1812 թվականին։ Սակայն վերև բերված և այլ բոլոր փաստաթղթերում, որոնք իր իսկ Նազարյանի տված տեղեկությունների հիման վրա են կազմված (և մանավանդ իր իսկ ձեռքով գրված ծննդյան վկայականը) ունեն միևնույն տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը, այն է՝ 1814 թ. մայիսի 15։

Այս բոլոր փաստաթղթերից բղխող համեմատական եզրակացությունը հիմք ընդունելով՝ պետք է Ստեփանոս Նազարյանի ծննդյան ճշտված, ստույգ և իսկական տարին, ամիսն ու ամսաթիվը համարել 1814 թ. մայիսի 15-ը։

---

[1] Архивное управление Тат. АССР, фонд Казанского императорского университета.